



ակտուալ
արվեստ

#12(18) 2022

125

STANDARD

ISSN 1829-0515
9 771829 051004


ՀԱՅԿԱՆՍԻ ԿԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
125
ՀԱՅԿԱՆՍԻ ԿԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

համդես-ա

(ԱՅ ԵՄ ԵՄ ԸՆ ա-համդես)

ԼԵՏԻՅԻԿ ԼԵՈՆԱՐԴԻ

(ծնվ. 1965, Չիլիսավեկիա, Իսալիա) Լրագրողուհի է, ով երկար տարիներ համագործակցել է «Il Tempo» եւ «Il Messaggero» թերթերի խմբագրությունների հետ: Քաղաքացիական հոգիակցների է հրատարակել հայկական իրականության վերաբերյալ: Իսալեռեն է թարգմանել Անրի Վերնոյի «Մայրիկ», ինչպես նաեւ Ինգա Լալթանդյանի «Գիշերվանեց» (Nella notte) գրքերը: Համահեղինակել է «Անկասար ճակատագիր» (Destino Imperfetto) գիրքը, որը դասնում է մի սփյուռփահայի կյանքի մասին: 2019 թվականին արժանացել է MARZANI լրագրողական եւ գրական միջազգային մրցանակին՝ «Տեղեկատվության ազատության եւ անկախության արժեքները խրախուսող իր մասնագիտական գործունեության համար»:



ԼԵՏԻՅԻԱ ԼԵՈՆԱՐԴԻ
 ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՏ.
 Դոկտի խոսվածուկ կյանքը
 Կարլո Վերդոնեի նախաբանով



111 106^a

հարցազրույց

ԻՏԱԼԱՅԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ՍԻՐՈՒՄ ԵՆ ՏԱՌԱՊՅԱԼ ՊՈԵՏՆԵՐԻՆ...

Ինչու՞ եւ ինչո՞ք՝ ս որոշեցիք զբաղվել Եղիշե Չարենցի կյանքի եւ ստեղծագործությունների ֆունդայամբ

ԼԵՏԻՅԻԱ ԼԵՈՆԱՐԴԻ. Ամեն ինչ յատկապես ստացվեց, բախտի բերմամբ: 2015 թվականին՝ հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցին, ես դեռ նոր էի լույս ընծայել Անրի Վերնոյի «Մայրիկ» գրքի իտալերեն թարգմանությունը, եւ իմ այդ աշխատանքի համար, որն Իտալիայում բարձր գնահատանքի արժանացավ, ինձ հաջորդ տարի հրավիրեցին Հայաստան՝ ծագումով հայ դերասանուհի Լաուրա Էֆրիկյանի հետ հատուկ կարգավիճակով մասնակցելու Grand Hotel Yerevan-ում բանաստեղծի այն սենյակի բացման արարողությանը, որտեղ նա մի բանի տարի ամբողջ է Մաշտոցի ողորտայում իր՝ այժմ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի վերածված տունն ստանալուց առաջ: Այդ առիթով սկսեցի ճանաչել այս մեծ բանաստեղծի՝ փորձություններով լի եւ միեւնոյն ժամանակ հետաքրքիր կյանքը, որն ինձ վրա մեծ տրամադրություն թողեց: Այդ դրանից եր, որ միտք հղացա զբաղվելու եւ ուսումնասիրելու այս հզոր ստեղծագործողին, որի մասին Իտալիայում [առանձնապես] ոչինչ հայտնի չէր: Ինձ հատկապես առջեցրել էր այս փոքրիկ ու հսկա մարդու բուռն կյանքը, մի մարդու, որը միեւնոյն ժամանակ է՛ համարձակ էր, է՛ նուրբ, որը երիտասարդ տարիքից տեսել էր աշխարհի սարսափներն ու կյանքով վճարել իր իդեալներին հավատարիմ մնալու համար: Այս վերջին գիծը հազվագյուտ երեւոյթ է մեր ժամանակներում, երբ ընդհանուր միտում կա սեփական արժեքներից հրաժարվելու՝ հանուն վարկանշի եւ իշխանության յառաջանման: Վերադառնալով Իտալիա՝ սկսեցի տեղեկություններ փնտրել Չարենցի մասին եւ բացահայտեցի ընդամենը մի փոքրիկ գրքույկ՝ թարգմանաբար ներկայացված երկու ողբերգություն, որի հեղինակը բանասեր եւ գրաքննադատ Մարիո Վերդոնեն է՝ դերասան եւ ռեժիսոր Կարլո Վերդոնեի հայրը: Համացանցում գտա նաեւ Չարենցի շատ սեղմ ներկայացված կենսագրականը: Իտալիայում Եղիշե Չարենցին ներկայացնելու հաստատական մտադրությունն էլ ավելի ամրադրվեց եւ այդ դրանից սկսվեց նրա շուրջ տեղեկությունների ուսումնասիրության բուն գործունեությունն նաեւ այլ լեզուների օգնությամբ, քանի որ մտադիր էի [իտալերեն լեզվով] հրատարակության ներկայացնել Չարենցի կենսագրության հնարավորինս ամբողջական խմբագրում, որն արժանի կլիներ հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մեկին: Այդ ամենը հնարավոր դարձավ շնորհիվ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի, բանաստեղծի թոռնուհի Գոհար Չարենցի աջակցության, ինչպես նաեւ բազմաթիվ հետազոտողների, որոնց թվում են Երեւանի ռետական համալսարանի դասախոս Գրիգոր Ղազարյանը, ինչպես նաեւ հայազգի տարբեր ընկերների, որոնք արժեքավոր ներդրում ունեցան [չարենցյան տեքստերի] բնագրից կատարած իրենց թարգմանություններով:

Որո՞՞նք են իսլացի ընթերցողի համար Եղիշե Չարենցի կյանքի եւ ստեղծագործական գործունեությանը վերաբերող ամենահետաքրքիր կետերը:

ԼԵՏԻՅԻԱ ԼԵՈՆԱՐԴԻ: Եղիշե Չարենցը եղել է մարդ, ով իր կյանքի ճանադարին բազմաթիվ դերեր է մարմնավորել՝ հայրենասեր, քաղաքական ակտիվիստ, բանաստեղծ, գրող, հեղափոխական եւ հակահեղափոխական, ստա-

111 106

հանդես-ա

լինյան բռնածնունդների գոհ: Հետաքրքիր էր ճանաչել եւ հասկանալ այդ բարդ կերպարի բնույթը, նրա անհատականությունը՝ նաեւ ուսումնասիրելով այն, ինչ իր մասին լուսատեղի էին իր մտերիները, ինչպես, օրինակ, իր մեծ բարեկամ Ռեզինա Ղազարյանը եւ այլ գրող ու լրագրող ընկերներ: Վերոգրյալը հաստատում է Հարենցի կերպարի էկլեկտիկ բնույթը՝ մի բան, որն անկասկած կհետաքրքրի իտալացի ընթերցողին: Հավելենք նաեւ այն խորհրդավորության շղարշը, որ լուսատեղի էր բանաստեղծի կյանքի վերջին օրերը, նրա մասին անհստակ տեղեկություններն ու այդպես էլ երբեք չհայտնաբերված մարմինը (մասուքները): Ինչ վերաբերում է նրա ստեղծագործություններին... ասյա դրանք եւս առանձնահատուկ են: Խոսքն ընդհանրապես մի յուրահատուկ հեղինակի մասին է, որը որդես գրող եւ բանաստեղծ տարաբնույթ գրական հոսանքներով է անցել: Համծար էր, ամենաստեղծագործ հայ բանաստեղծ, որին շարունակաբար բացահայտում եւ վերաբացահայտում ենք: Եվ այն, ինչ միանշանակ հետաքրքրաշարժ կլինի իտալացի ընթերցողների համար, Հարենցի լեզուն է՝ շատ բարդ, յուրատիպ, աղերսներով հարուստ (որոնք թերեւս օգնում էին փրկվել սովետական գրաքննադատության մեքենայից): Համծարեղ են բառախաղերը, նրա ստեղծած բառաձեւերը, փոխաբերական արտահայտությունները եւ վերջապես աքրոստիքները... Այս ամենը, իհարկե, գրավում է ընթերցողին: Շատ տեքստեր նաեւ ինքնակենսագրական բնույթի են եւ լուսատեղի են հեղինակի ամրած խոր ցավն ու կուտրված երազներից բխող հուսալքությունը, իր վիշտն ու դառնությունն առ այն, որ չէր կարողանում տեսնել իր սիրելի Հայաստանը որդես սովետական ռեժիմի աքցանից դուրս՝ անկախ հանրապետություն: Իր ստեղծագործությունների միջոցով Հարենցը շարունակում է աղթել ու լուսատեղի մեզ այդ ամենը, եւ սա ընկալելի է իր ընթերցողի համար: Իտալացի ընթերցողները սեր են տածում տառադայալ լրագրողների հանդեպ: Հարենցը ծնվել է աղթել է մի ժամանակահատվածում, երբ քաղաքական բռնությունը եւ լուսատեղի կան իրադարձությունները լուսաբանեց համազայտ չէին տալիս, դրանք խլել էին նրա մանկությունը, զոդացել երիտասարդությունն ու վերջապես կործանեցին նաեւ կյանքը: Լա երիտասարդ մահացավ, բայց դարձավ անմահ:

Ի՞նչ կհավելեիք Հարենցյան ուսումնասիրությունների ձեռ անձնական փորձառության մասին

Հարենցի կենսագրությունն իտալերեն գրելու իմ անձնական փորձառությունը խիտ էր: Ամեն անգամ, երբ առերեսվում էի հայալեզու տեքստերի հետ, որոնք ինձ համար անհասկանալի էին, ցանկանում էի անհաղաղ իմանալ դրանց բովանդակությունը: Ինձ համար հուզիչ էր բանաստեղծի՝ իր ընկերներին ուղղված նամակները թարգմանաբար ընթերցելը, Ռեզինա Ղազարյանի հուշագրությունները, բանաստեղծությունները, որոնցից մի քանիսն անչափ հուզիչ են: Եվ երբ առաջին անգամ մտա Եդիշե Հարենցի տուն-թանգարան, հատկապես դրա այն մասը, որտեղ բանաստեղծի բնակարանն է եղել, զգացողությունս այնտիպին էր, ասես այդտեղ սրբաբան լինեի տանտիրոջը, որ ուր որ է ժամանելու էր: Բազմաթիվ իրերը, որոնք մեկտեղված են թանգարանում, ավելի անմիջական կադ են ստեղծում բանաստեղծի հոգու հետ՝ օգնելով զգալ նրա կենդանի ներկայությունը: Հարենցի կենսագրությունը գրելը հեշտ չէր, սակայն ի վերջո այս ոլորտը ներթափանցեց իմ մեջ, եւ նրա կերպարի, տեղայնության, որոնք կուտրված, սեփական երազանքներին ձգտելու համառության որոշ գծերում եւ գտա ինքս ինձ: Հագցում, որն առշեջրեց ինձ եւ հուսով եմ՝ կհամակն նաեւ բոլոր նրանց, ովքեր կբացահայտեն այս մեծ գրողի եւ բանաստեղծի կյանքը: ■

Թարգմանությունը իտալերենից, գրիգոր դազարյան |



Լեւոնցիա Լեւոնարոյի եւ Լորալանը կամ հակառակը...



Լեւոնցիա եւ Սողոմոնի կամ...